ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2014թ. N_____-Ն

ք. Ստեփանակերտ

ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՑԱԾ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9.7-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել պիտանելիության ժամկետը լրացած, սահմանված կարգով դուրս գրված ապրանքների դրոշմապիտակների գծով պարտավորությունների հաշվարկման և մարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի _____ _____-ի
N _____ -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՑԱԾ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9.7-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ պիտանելիության ժամկետը լրացած, սահմանված կարգով դուրս գրված ապրանքների դրոշմապիտակների գծով պարտավորությունների հաշվարկման և մարման հետ կապված ընդհանուր հարցերը:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է 2014 թվականի սեպտեմբերի 18-ի «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-32-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ պիտանելիության ժամկետը լրացած, սահմանված կարգով դուրս գրված ապրանքների վրա փակցված դրոշմապիտակների համար վճարված գումարով նվազեցված հարկային պարտավորությունների գումարի չափով արտադրողի կամ ներմուծողի մոտ դրոշմապիտակների գծով պարտավորությունների հաշվարկման և մարման վրա:

3. «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9.2-րդ հոդվածով սահմանված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված ապրանքատեսակների պիտանելիության ժամկետը լրանալու հետևանքով դուրսգրումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի «Պիտանիության ժամկետում

չիրացված՝ դրոշմավորված ապրանքների դուրսգրման կարգը սահմանելու մասին» N 984-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4. Պիտանելիության ժամկետը լրացած, սահմանված կարգով դուրս գրված ապրանքների վրա փակցված դրոշմապիտակների համար վճարված գումարի հաշվին նվազեցված (հաշվանցված) հարկային պարտավորությունների գումարի չափով արտադրողի կամ ներմուծողի մոտ առաջանում է դրոշմապիտակների գծով պարտավորություն՝ այդ ապրանքների դուրսգրման օրվա դրությամբ: Սույն կետում նշված՝ ապրանքների դուրսգրման օր է համարվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի N 984-Ն որոշմամբ սահմանված կարգի 12-րդ կետին համապատասխան՝ ապրանքների դուրսգրման ակտի ձևակերպման օրը:

5. Պիտանելիության ժամկետը լրացած, սահմանված կարգով դուրս գրված ապրանքների վրա փակցված դրոշմապիտակների համար վճարված այն գումարները, որոնց հաշվին ապրանքների դուրսգրման օրվա դրությամբ հարկային պարտավորություններ չեն նվազեցվել (հաշվանցվել), ենթակա չեն հաշվանցման կամ վերադարձման. այս դեպքում նշված գումարների չափով կատարվում է ձեռք բերված դրոշմապիտակների դիմաց վճարված գումարների պակասեցում:

6. Դրոշմապիտակի գծով պարտավորությունը կարող է մարվել դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարների հաշվառման քարտում դրական մնացորդի հաշվին:

7. Դրոշմապիտակի գծով չմարված պարտավորության նկատմամբ հաշվարկվում է տույժ՝ «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով և չափերով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ **Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**